ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության և Վրաստանի Հանրապետության մաքսային կոմիտեի միջև թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության մաքսային վարչությունը և Վրաստանի Հանրապետության մաքսային կոմիտեն, այսուհետ՝ Կողմեր,

հաշվի առնելով թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառության կանխման գործում մաքսային մարմինների դերը, ձգտելով զարգացնել այդ բնագավառում փոխհամագործակցությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, իրենց մեջ գործող օրենքներն ու կանոնները պահպանելու պայմանով, սույն Համաձայնագրի սահմաններում կհամագործակցեն թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառությունը կանխելու և հետաքննելու բնագավառում:

Հոդված 2

Կողմերը կփոխանակեն՝

ա) տեղեկություններ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի մեթոդների մասին,

բ) տեխնիկական միջոցների օգտագործման փորձը,

գ) մասնագետներ՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի մեթոդները ուսուցանելու նպատակով,

դ) թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հարցերի վերաբերյալ գիտական հրատարակություններ և ուսումնական ձեռնարկներ,

ե) տեղեկություններ թմրամիջոցների արտադրության նոր ձևերի և տեղերի, տեղափոխման երթուղիների ու դրանց թաքցնելու միջոցների մասին,

զ) թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի նույնացման և լաբորատոր հետազոտության բնագավառում տեղեկություններ:

Հոդված 3

Կողմերը փոխանակում են տեղեկություններ՝

ա) թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառությամբ զբաղվող կասկածելի կամ հայտնի անձանց մասին,

բ) փոխադրամիջոցների, բեռների և փոստային առաքումների վերաբերյալ, որոնք օգտագործվում են թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառության մեջ՝ տարանցիկ անցնելով Կողմերից մեկի տարածքով մյուսը:

Հոդված 4

Իրենց իրավասությունների և տեխնիկական հնարավորությունների շրջանակներում Կողմերը կիրագործեն հսկողություն.

թմրամիջոցների և հոգեներգործող նյութերի ապօրինի շրջանառության մեջ մասնակիցների և կասկածյալների նկատմամբ,

ապօրինի շրջանառության մեջ օգտագործման համար կասկածելի բեռների, փոխադրամիջոցների և փոստային առաքումների նկատմամբ:

Հսկողության արդյունքները հայտնվում են մյուս Կողմին:

Հոդված 5

Կողմերը կհամագործակցեն վերահսկելի առաքումների և այլ համանման մեթոդների իրականացման բնագավառում:

Վերահսկելի առաքումների օգտագործման մասին որոշումներն ընդունվում են յուրաքանչյուր առանձին դեպքում Կողմերի գործող օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 6

Կողմերը կձեռնարկեն բոլոր միջոցները՝ Կողմերի պետությունների դատական և քննչական մարմիններին տրամադրելու նյութեր, փորձագիտական եզրակացություններ և հայտնաբերված փաստերի մասին այլ տեղեկություններ:

Հոդված 7

Կողմերի միջև գրագրությունը կտարվի ռուսերենով:

Տեղեկությունների փոխանակում կիրականացվի կապի հետևյալ միջոցներով.

Հայաստանի Հանրապետությունում՝ Հայաստանի Հանրապետության մաքսային վարչության կազմատեսչական բաժնի,

Վրաստանի Հանրապետությունում՝ Վրաստանի Հանրապետության մաքսային կոմիտեի մաքսանենգության և մաքսային իրավախախտումների դեմ պայքարի վարչության:

Կապի միջոցների որևէ փոփոխության մասին Կողմերը տեղեկացնում են միմյանց:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու օրվանից:

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամանակով, նրա ուժի մեջ մտնելու օրվանից հաշված, և ամեն անգամ ինքնաբերաբար երկարաձգվում է հաջորդ հնգամյա ժամանակահատվածի համար, եթե Կողմերից մեկը հնգամյա ժամանակահատվածի լրանալուց վեց ամիս առաջ գրավոր չի տեղեկացնում նրա գործողությունը դադարեցնելու իր ցանկության մասին:

Կատարված է Երևան քաղաքում 1993 թվականի մայիսի 19-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և վրացերեն, ընդ որում երկու բնօրինակներն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի մայիսի 19-ից: